

ԿԱՍՊՅԱՆ ԱՎԱԶԱՆԸ ՈՐՊԵՍ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

Ֆ.Ա. Միրզախանյան

«ՄԻՏՔ» կրթական-երիտասարդական նախաձեռնություն ՅԿ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Յողվածում ցույց է տրված, որ Կասպյան ավազանը աշխարհաքաղաքական մեծ նշանակություն ունի: Ռազմավարական նշանակությունը հիմնականում որոշվում է երկու գործոնով՝ տարածաշրջանում առկա զազի և նավթի պաշարներով և աշխարհագրական դիրքով: Գլոբալ ուժերը՝ ԱՄՆ-ն, ԵՄ-ն մի կողմից, Չինաստանը մյուս կողմից, պայքարում են Կասպյան տարածաշրջանում ազդեցության գոտիներ ձեռք բերելու համար: Ռուսաստանն էլ իր հերթին փորձում է պահպանել իր ազդեցության գոտիները տարածաշրջանում՝ վարելով ճկուն քաղաքականություն:

Քանալի բառեր. Կասպից տարածաշրջան, աշխարհաքաղաքական մրցակցություն, գլոբալ ուժեր, ռազմավարական նշանակություն:

Կասպյան տարածաշրջանի ժամանակակից քարտեզը մշակվել է 1991թ. վերջերին ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ Կասպյան ավազանի շրջակայքը համալրեցին նոր, անկախ պետություններ, ինչպիսիք էին Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը: Շատ շուտով նրանք հայտնվեցին աշխարհի առաջատար պետությունների և միությունների ուշադրության կենտրոնում ինչպիսիք են, օրինակ, Եվրոպական Միությունը (ԵՄ) և Ամերիկայի Միացյալ Նահանգները (ԱՄՆ)¹:

Կասպյան տարածաշրջանը համաաշխարհային աշխարհաքաղաքական գործընթացների համար ռազմավարական նշանակություն ունի²: Տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը որոշվում է հետևյալ գործոններով.

Առաջին, Կասպյան ավազանը աշխարհում նավթ ունեցող ամենահարուստ տարածաշրջաններից է: Ըստ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման Միջազգային միության տվյալների (ՇՄԱԳ), Կասպյան ավազանը պարունա-

¹ Жильцов С., Трубопроводы в Центральной Азии и Каспийском регионе: новый этап борьбы, Центральная Азия и Кавказ, № 3, 2014, сс. 139-152.

² Orazgaliyev S., Araral E., Conflict and Cooperation in Global Commons: Theory and Evidence from the Caspian Sea, International Journal of the Commons, № 2, 2019, pp. 962-976.

կում է 48 միլիարդ բարել նավթ և 292 տրիլիոն խորանարդ մետր բնական գազ՝ հավանական և հայտնաբերված պահուստներում: Այս պաշարներից նավթի մոտ 75% և բնական գազի 67% գտնվում են ավից մոտ 100 մղոն հեռավորության վրա³:

Միջազգային հարաբերություններում նավթի գործոնը կարևոր դերակատարություն ունի: Այն սահմանում է տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը և որոշում պետության քաղաքական դերը: Մեծ ուժերը պատմականորեն միշտ ներգրավված են եղել նավթով հարուստ տարածաշրջաններում և պետություններում, որպեսզի վերահսկեն դրանք:

Երկրորդ՝ աշխարհագրական առումով, տարածաշրջանը գտնվում է աշխարհի քաղաքական և տնտեսական կարևորագույն շրջաններում՝ Եվրոպա, Միջին Արևելք, Հարավային և Արևելյան Ասիա: Կասպյան տարածաշրջանը նրանց կապող լավագույն ուղին է⁴:

Կասպյան տարածաշրջանում քաղաքական զարգացումների մոր փուլի սկիզբը համարվում է 2001թ., սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումը, որը փոխեց ռազմավարական պայմանները միջազգային և տարածաշրջանային մակարդակներում: Նոր ռազմավարական պայմաններում ԱՄՆ-ն ամրապնդել է իր քաղաքական և տնտեսական դիրքերը Կենտրոնական Ասիայում և Կասպյան տարածաշրջանում, մինչդեռ Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը թուլացել է: Կասպյան ավազանի շահերի հիմնական խմբերը կարելի է բաժանել հետևյալ կերպ.

Կասպյան ավազանի երկրները կամ ծովափնյա երկրները՝ որոնք են Ղազախստանը, Թուրքմենստանը, Ռուսաստանը, Ադրբեջանն ու Իրանը: Այս պետությունները հետաքրքրված են Կասպից ավազանի բնական պաշարներով և նրանցից յուրաքանչյուրը փորձում է լավագույնս օգտագործել՝ ռեսուրսները համաշխարհային շուկայում տեղ զբաղեցնելու և տնտեսությունը զարգացնելու համար⁵:

Խաչներուկային պետությունները, ինչպիսիք են Ռուսաստանը, Իրա-

³ *Caspian Sea: Overview of oil and natural gas in the Caspian Sea region*, <https://www.eia.gov/beta/international/regions-topics.php?RegionTopicID=CSR>.

⁴ *Kaliyeva D., The Geopolitical Situation in the Caspian Region, UNISCI Discussion Papers, № 2, 2004, pp. 1-10.*

⁵ *Overview of oil and natural gas in the Caspian Sea region*, <https://www.eia.gov/beta/international/regions-topics.php?RegionTopicID=CSR>.

նը, Թուրքիան, Վրաստանը, Հայաստանը, Ուկրաինան, Ռուսիան, Բուլղարիան, Չինաստանը և այլք, որոնք փորձում են օգուտ քաղել իրենց աշխարհագրական դիրքից գտնվելով Կասպից ավազանի նավթի և գազի հանքերի, ինչպես նաև համաշխարհային առևտրի կենտրոնում⁶ :

Գլոբալ ուժերը՝ ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, ԵՄ, և **տարածաշրջանային ուժերը՝** Իրան, Թուրքիա, Ռուսաստան, որոնք ձգտում են ամրապնդել իրենց դիրքերը Կասպյան տարածաշրջանում և օգտագործել այն, որպես հարթակ սեփական շահերի խթանման համար ռազմավարական նշանակություն ունեցող այլ շրջաններում⁷ :

Ռուսաստանը Կասպյան տարածաշրջանի առանցքային դերակատարներից մեկն է. այն ունի համեմատաբար ուժեղ ռազմական ներուժ, ծովափնյա պետությունների մեջ ամենաուժեղը լինելու համար: Խորհրդային միության փլուզումից հետո Ռուսաստանը դարձել է կարևոր տարանցիկ պետություն, որն ապահովում է դեպի ծով ելք չունեցող երկրների էներգետիկ ռեսուրսների արտահանման հիմնական երթուղիները շահութաբեր համաշխարհային շուկաներ⁸ :

Կասպյան տարածաշրջանում քաղաքական-տնտեսական շահերը ստիպել են Ռուսաստանին փոխել իր դիրքորոշումը ավազանի կարգավիճակի հարցում: Պուտինը, դառնալով նախագահ, նոր ոճ է մտցնում ռուսական քաղաքականության մեջ, որը վերաբերում է նաև Կասպյան տարածաշրջանին: Ռուսաստանը փորձում է պահել իր գերակա դիրքը տարածաշրջանում՝ օգտագործելով «ճկուն ռազմավարություններ»⁹:

ԱՄՆ-ի ներգրավումը տարածաշրջան՝ որպես «Բաքու-Թբիլիսի-Ջեիյան» նավթամուղի հովանավոր, կարող է հանգեցնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության նվազմանը: Այդ պատճառով, Ռուսաստանն իր

⁶ Kalিয়েva D., *The Geopolitical Situation in the Caspian Region, UNISCI Discussion Papers, № 2, 2004, pp. 1-10.*

⁷ Goldwyn D, Olcott M., and others, *The Caspian Region and the New Great Powers*, <https://www.mepc.org/journal/caspian-region-and-new-great-powers>

⁸ Darabadi P., *The Caspian Region in the international geopolitical system of the early century, The Caucasus and globalization, № 4, 2010, pp. 7-18.*

⁹ Monineath E., "Russia and its power in Caspian Sea under Putin administration", https://www.researchgate.net/publication/293745382_Russia_its_Power_in_Caspian_Sea_under_Putin_Administration.

հերթին փորձում է համագործակցության ուղիներ գտնել Իրանի, Իրաքի, Չինաստանի և Յնդկաստանի հետ: Բացի այդ, փորձում է խաթարել ԱՄՆ-Ղազախստան, ԱՄՆ-Ադրբեջան տարածաշրջանային հարաբերությունները՝ լուծելով սահմանային խնդիրները երկու պետությունների հետ, և կնքել մի շարք պայմանագրեր, որոնք հետագայում թույլ կտան զարգացնել գազի և նավթի ոլորտը¹⁰:

2000թ., երբ Ռուսաստանի անվտանգության խորհուրդը քննարկում էր Կասպյան ավազանի հարցը Պուտինն իր ելույթում հայտարարել է. «Պետք է հասկանալ, որ մեր գործընկերների՝ Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի հետաքրքրությունը դեպի Կասպից ավազանը պատահական չէ: Դա նրանից է, որ մենք ակտիվ չենք տարածաշրջանում: Մենք չպետք է թույլ տանք, որ Կասպյան ավազանը դառնա բախումների ևս մեկ տարածաշրջան: Մենք պետք է հասկանանք, որ ոչինչ երկնքից չի իջնում որպես մանանա: Այս ամենը մրցակցության հարց է և մենք պետք է մրցունակ լինենք¹¹:

Այսպիսով, Ռուսաստանն սկսեց համագործակցել այլ առափնյա պետությունների հետ՝ առաջարկելով փոխադարձաբար շահավետ նախագծեր էներգետիկ ասպարեզում: Այնուամենայնիվ, այն շարունակում էր դեմ լինել այլընտրանքային խողովակաշարերի կառուցմանը՝ էներգետիկ ռեսուրսների տեղափոխման մենաշնորհային դիրքը պահպանելու համար:

Ներկայումս Կասպյան տարածաշրջանում ռուսական քաղաքականության համար գոյություն ունի երեք կարևոր խնդիր.

- Տարածաշրջանում դիրքի պահպանում և ամրապնդում,
- Տարածաշրջանի կայունության խթանում,
- Տարածաշրջանային համագործակցության զարգացում:

Այնուամենայնիվ, տարածաշրջանային համագործակցության կայունությունը պահանջում են Կասպյան ավազանի իրավական կարգավիճակի հրատապ լուծում: Ներկայումս, այն ափամերձ պետությունների փոխհարաբերությունները որոշող ամենակարևոր հարցն է¹² :

Կասպից ավազանի արտահանման այլընտրանքային ուղու կառուց-

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Saivetz C., *Putin's Caspian Policy*, <https://www.belfercenter.org/publication/putins-caspian-policy>.

¹² Kaliyeva D., *The Geopolitical Situation in the Caspian Region*, *UNISCI Discussion Papers*, № 2, 2004, pp. 1-10.

ման գաղափարը առաջ էին մղում **ԱՄՆ-ն և Եվրոպական Միության** անդամ երկրները: Եթե ԱՄՆ-ի համար այս հարցը զուտ քաղաքական նշանակություն ունի, այսինքն՝ թուլացնել տարածաշրջանի երկրների կախվածությունը ռուսական խողովակաշարերից, ապա Եվրամիության համար նաև տնտեսական խնդիր է, քանի որ Եվրոպական գազի շուկան լուրջ կախվածություն ունի ռուսական գազի առաքումներից¹³:

ԱՄՆ-ն, չունենալով աշխարհագրական դիրքի և պատմական ներկայության առավելությունները տարածաշրջանում, ինչպես Ռուսաստանը, ԽՍՀՄ փլուզումից հետո հետաքրքրվեց տարածաշրջանով և տեղի ունեցող գործընթացներով¹⁴:

Այժմ, Կասպյան տարածաշրջանում ԱՄՆ-ն ունի հետևյալ նպատակները.

- Աջակցել Կասպից ավազանին, որպեսզի այն դառնա ռեսուրսների փոխադրման անվտանգ գոտի,
- Տարածաշրջանում ռուսական և իրանական միջամտությունը հսկելու նպատակով, հետևել, որ տարածաշրջանի պետությունները լինեն կայուն և ինքնիշխան,
- Դուրս վանել արմատական Իսլամը տարածաշրջանից,
- Փորձել լուծել տարածաշրջանային սառեցված հակամարտությունները, քանի որ Ռուսաստանն իր ազդեցության մեծ մասը ձեռք է բերում այս հակամարտությունների շնորհիվ¹⁵:

Այսպիսով՝ ԱՄՆ-ն աջակցում էր մի շարք ծրագրերի, որոնք հնարավորություն կտային կառուցել այլընտրանքային գազամուղներ: Դրանցից մեկը Թուրքմենստանից Ադրբեջանի տարածքով 2000կմ. գազամուղի կառուցումն էր, որը պետք է իրականացներ ամերիկյան «էնրոն» ընկերությունը (Enron), և, որով հետագայում զբաղվեց «Յուկոթըլ» (Uthocal) ընկերությունը¹⁶:

¹³ Մանվելյան Ա., *Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում, Տիգրան Մեծ հրատ.*, Երևան, 2015, էջ 77:

¹⁴ Kubicek P., *Energy Politics and Geopolitical Competition in the Caspian Basin*, *Journal of Eurasian Studies*, № 4, 2013, pp. 171-180.

¹⁵ Coffey L., *A Secure and Stable Caspian Sea is in America's Interest*, <https://www.heritage.org/europe/report/secure-and-stable-caspian-sea-americas-interest?fbclid=IwAR1igtfnYsoc9KityWdInEiWntexg5CQh9BqLelHgiRiwdhpV3CXYIiVes>.

¹⁶ *Enron submits feasibility study for Trans-Caspian gas pipeline*, <https://jamestown.org/program/enron-submits-feasibility-study-for-trans-caspian-gas-pipeline/>.

«Յունոքըլ» ընկերությունը մշակել էր Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան գազամուղի կառուցման ծրագիրը, որը չիրականացավ: Այնուամենայնիվ, այդ փորձը հետագայում օգտագործեց Ադրբեջանը՝ դեպի Թուրքիա նոր գազամուղի կառուցման համար:

ԱՄՆ-ի իրականացրած առանցքային նշանակություն ունեցող ծրագրերից մեկը «Բաքու-Թբիլիսի-Ջեհյան» խողովակաշարի շինարարության նախագիծն է, որտեղ 3 պետություններն էլ ունեն ընդհանուր աշխարհաքաղաքական շահեր¹⁷:

Ինչպես նշվեց, **Եվրամիության** համար գազի արտահանման այլընտրանքային ուղիների կառուցումը նաև տնտեսական մի շարք խնդիրներ կարող է լուծել: 21-րդ դարի առաջին տասնամյակում էներգետիկ անվտանգության խնդիրը դարձավ եվրոպական արտաքին, ինչպես նաև անվտանգային քաղաքականության օրակարգի առանցքային խնդիր:

Էներգիայի մատակարարման տարանցիկ ուղիների դիվերսիֆիկացիան առանցքային պահանջ է դարձել ԵՄ անդամ երկրների համար: Ի լրումն ԵՄ պաշտոնյաների հայտարարությունների, ընդունվում են մի շարք փաստաթղթեր, որոնք նշանակալից ազդեցություն կունենան ԵՄ արտաքին էներգիայի մատակարարումների աշխարհագրական դիվերսիֆիկացիան ավելացնելու գործում¹⁸:

«Էներգետիկա՝ 2020: Մրցունակ, կայուն և անվտանգ էներգիայի ռազմավարություն» փաստաթղթում էներգետիկ ոլորտում կարևորում է հետևյալը.

- Եվրոպան դարձնել ավելի էներգաարդյունավետ՝ ավելացնելով ներդրումները որակյալ շինությունների, ապրանքների և տրանսպորտի ոլորտում,
- Ստեղծել համաեվրոպական էներգետիկ շուկա,
- Պաշտպանել սպառողների իրավունքները և էներգետիկ ոլորտում բարձր ստանդարտներ ձեռք բերել,
- Ուժեղացնել Եվրոպայի դիրքերը էներգետիկ տեխնոլոգիաների և նորարարության բնագավառում,
- Համագործակցային հարաբերություններ ձեռք բերել ԵՄ էներգետիկ

¹⁷ Kalieva D., *The Geopolitical Situation in the Caspian Region, UNISCI Discussion Papers, № 2, 2004, pp. 1-10.*

¹⁸ Terzyan A., *Normative and Political Dimensions of the European Union's Energy Policy: The Case of the South Caucasus, Armenian Journal of Political Science, № 1. 2014, pp. 123-135.*

արտաքին մատակարարների և էներգետիկ տրանզիտային պետությունների հետ¹⁹:

Գազի այլընտրանքային մատակարարման հարցում Եվրոպական խորհուրդը որոշում ընդունեց 2010թ. Դեկտեմբերի 2-ին: Մշակվեց «Հարավային միջանցք» նոր ռազմավարությունը, որի շրջանակներում դիտարկվում էին հետևյալ նախագծերը²⁰.

- NABUCCO- Թուրքիա-Բուլղարիա-Ռումինիա-Հունգարիա-Ավստրիա
- ITGI-Թուրքիա-Հունաստան-Իտալիա
- TAP-Հունաստան-Ալբանիա-Ադրիատիկ ծով-Իտալիա
- White Stream-Վրաստան-Սև ծով-Ուկրաինա-Ռումինիա

Եվրամիության համար առանցքային նշանակություն ուներ NABUCCO գազատարի կառուցումը, որը դեռևս իրականություն չի դարձել:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում **Չինաստանի** հետաքրքրությունը կտրուկ աճել է դեպի բնական պաշարներով հարուստ Կասպյան ավազանը: Սակայն, մինչև էներգետիկ ոլորտ տեղափոխվելը, Պեկինը տարածաշրջանում առևտրային և ընդհանրապես տնտեսական ակտիվ գործունեություն էր ծավալում²¹ :

Այսպիսով, Չինաստանի տնտեսությունը սկսեց զարգանալ, իսկ դրան զուգահեռ ավելացավ պահանջը էներգետիկ աղբյուրների նկատմամբ: Այդ պատճառով Չինաստանն սկսեց ներդրումներ անել Կենտրոնական Ասիայում և Կասպից ավազանում և, հատկապես, Ղազախստանում և Թուրքմենստանում՝ երկու հիմնական ենթակառուցվածքային նախագծերի համար. դրանք էին Ղազախստան-Չինաստան նավթամուղը և Թուրքմենստան-Չինաստան գազամուղը²²:

Անհրաժեշտ է նշել, որ Չինաստանի հետաքրքրությունը համընկնում էր նաև Ղազախստանի տնտեսական և քաղաքական շահերին: Նախագահ Նուրսուլթան Նազարբանև իր առջև նպատակ էր դրել բազմազանեցնել

¹⁹ 2020 Energy Strategy, <https://ec.europa.eu/energy/en/topics/energy-strategy-and-energy-union/2020-energy-strategy>.

²⁰ Southern Gas Corridor, <https://www.tap-ag.com/the-pipeline/the-big-picture/southern-gas-corridor>.

²¹ Zhiltsov S., *The Caspian Region at the Crossroads of Geopolitical Strategies, Central Asia and the Caucasus*, № 1, 2014, pp. 33-43.

²² Bhaya G., *Why is Caspian Sea security in China's interest?*, https://news.cgtn.com/news/3349544f31557a6333566d54/share_p.html.

ղազախական նավթի արտահանման ուղիները: Արևմուտքն աջակցում էր Ղազախստանի նախագահին՝ առաջ քաշելով Բաքու-Թբիլիսի-Ջեյհանի գաղափարը, սակայն Չինական ուղղությունը չէր մտնում ԱՄՆ աշխարհառազմավարական ծրագրերի մեջ²³:

Չին-ղազախական նավթամուղի բանակցություններն սկսվեցին 1997թ. Սեպտեմբերին, իսկ արդեն 2006թ. տեղի ունեցավ նավթամուղի պաշտոնական բացումը: Կողմերը 2010թ. կառուցեցին նմանատիպ մեկ այլ խողովակաշար՝ այս անգամ գազամուղ²⁴:

Չինաստանը հետաքրքրված է Կասպյան տարածաշրջանով նաև, Մեկ գոտի մեկ ուղիե նախաձեռնության շրջանակներում:

Այսպիսով, գլոբալ ուժերը՝ ԱՄՆ-ն, ԵՄ-ն մի կողմից, Չինաստանը մյուս կողմից, պայքարում են Կասպյան տարածաշրջանում ազդեցության գոտիներ ձեռք բերելու համար: ԱՄՆ-ն և ԵՄ-ն ֆինանսավորում են մի շարք խողովակաշարային նախագծեր, որոնք շրջանցում են Ռուսաստանը՝ փորձելով թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանային պետություններում: Ռուսաստանն էլ իր հերթին փորձում է պահպանել իր ազդեցության գոտիները տարածաշրջանում՝ վարելով ճկուն քաղաքականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանվելյան Ա., Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2015, 257էջ:
2. Alvartez M., China-Kazakhstan Energy Relations Between 1997 and 2012, <https://jia.sipa.columbia.edu/china-kazakhstan-energy-relations-1997-2012>.
3. Bhaya G., Why is Caspian Sea security in China's interest?, https://news.cgtn.com/news/3349544f31557a6333566d54/share_p.html.
4. Caspian Sea: Overview of oil and natural gas in the Caspian Sea region, <https://www.eia.gov/beta/international/regions-topics.php?RegionTopicID=CSR>.
5. Coffey L., A Secure and Stable Caspian Sea is in America's Interest, <https://www.heritage.org/europe/report/secure-and-stable-caspian-sea-americas-interest?fbclid=IwAR1igtfnYsoc9KityWtdInEiWntexg5CQh9BqLelHgiRiwdhpV3CXY1iVes>.

²³ Մանվելյան Ա., Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2015, էջ 128:

²⁴ Alvartez M., China-Kazakhstan Energy Relations Between 1997 and 2012, <https://jia.sipa.columbia.edu/china-kazakhstan-energy-relations-1997-2012>.

6. Darabadi P., The Caspian Region in the international geopolitical system of the early century, *The Caucasus and globalization*, № 4, 2010, pp. 7-18.
7. Enron submits feasibility study for Trans-Caspian gas pipeline, <https://jamestown.org/program/enron-submits-feasibility-study-for-trans-caspian-gas-pipeline/>.
8. Goldwyn D, Olcott M., and others, The Caspian Region and the New Great Powers, <https://www.mepc.org/journal/caspian-region-and-new-great-powers>.
9. Kaliyeva D., The Geopolitical Situation in the Caspian Region, UNISCI Discussion Papers, № 2, 2004, pp. 1-10.
10. Kubicek P., Energy Politics and Geopolitical Competition in the Caspian Basin, *Journal of Eurasian Studies*, № 4, 2013, pp. 171-180.
11. Monineath E., ‘Russia and its power in Caspian Sea under Putin administration’, https://www.researchgate.net/publication/293745382_Russia_its_Power_in_Caspian_Sea_under_Putin_Administration.
12. Orazgaliyev S., Aralar E., Conflict and Cooperation in Global Commons: Theory and Evidence from the Caspian Sea, *International Journal of the Commons*, № 2, 2019, pp. 962-976.
13. Overview of oil and natural gas in the Caspian Sea region, <https://www.eia.gov/beta/international/regions-topics.php?RegionTopicID=CSR>.
14. Saivetz C., Putin’s Caspian Policy, <https://www.belfercenter.org/publication/putins-caspian-policy>.
15. Southern Gas Corridor, <https://www.tap-ag.com/the-pipeline/the-big-picture/southern-gas-corridor>.
16. Terzyan A., Normative and Political Dimensions of the European Union’s Energy Policy: The Case of the South Caucasus, *Armenian Journal of Political Science*, № 1. 2014, pp. 123-135.
17. Zhiltsov S., The Caspian Region at the Crossroads of Geopolitical Strategies, *Central Asia and the Caucasus*, № 1, 2014, pp. 33-43.
18. 2020 Energy Strategy, <https://ec.europa.eu/energy/en/topics/energy-strategy-and-energy-union/2020-energy-strategy>.
19. Жильцов С., Трубопроводы в Центральной Азии и Кайсписком регионе: новый этап борьбы, *Центральная Азия и Кавказ*, № 3, 2014, сс. 139-152.

CASPIAN REGION AS A ZONE OF GEOPOLITICAL COMPETITION OF SUPERPOWERS

F.A. Mirzakhanyan

SUMMARY

In this article, it is shown that Caspian Basin has a great geopolitical significance. The strategic importance is mainly determined by two factors: gas and oil reserves in the region and geographical location. Global powers the Unites States, the European

Union, on the one hand, and China, on the other hand, are struggling to gain influence in the region. Russia is trying to maintain its influence in the region by pursuing a flexible policy.

Key words. *Caspian Region, geopolitical competition, global powers, strategic importance.*

КАСПИЙСКИЙ БАССЕЙН КАК ЗОНА ГЕОПОЛИТИЧЕСКОЙ КОНКУРЕНЦИИ СВЕРХДЕРЖАВ

Ф.А. Мирзаханян

Показано, что Каспийский бассейн имеет большое геополитическое значение. Стратегическое значение в основном определяется двумя факторами: запасами газа и нефти в регионе и географическим положением. Глобальные силы, Соединенные Штаты, Европейский Союз, с одной стороны, и Китай, с другой, борются за влияние в Каспийском регионе. Россия, со своей стороны, пытается сохранить свое влияние в регионе, проводя гибкую политику.

Ключевые слова. *Каспийский регион, геополитическая конкуренция, глобальные силы, стратегическое значение.*